


ՏԵՐԻ ՏԵՐԻ  
 Ե. ԹՈՐՈՍՏԻԱՆ  
 Ետանկ կամ որ եւ է  
 զբուժելու պէտքէ ուղղել առ  
 Տեօրին. ԱՐՇԱՆՅՍ ըրագրի  
 ԳԱՆԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
 Ե՛ԿԻՊՏՈՒ ՉԱՄՍՐ  
 Տարեկան ողջ դասերն. 60  
 Վեջաներն. 35  
 ՕՏՁՐ ԵՐԿՐԻՆԷՐ  
 Տարեկան Տրամբ 20  
 Վեջաներն. 12

E. TOROSSIAN  
 Direc. propr. du journal armenien  
 ARCHEOLOGIQUE  
 LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Պ Ի Ր  
 ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԻՒԿ  
 Եւ թղթատարի ծախքը  
 Խնայարարական վրայ է :  
 Խնայարարական ուղղութեամբ  
 գրութիւնք եւ չ'են տրուին  
 \*  
 ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԷՐ  
 Կանխիկ վճարելի են

Հ Չ Օ Ր Ա Գ Ո Յ Ն Ը

Ընդհանրապէս կը կարծուի թէ մեզայ  
 ծնունդ մահուան առջև ամեն գլուխ — ԸԼԼայ  
 տիեզերակալ. ԸԼԼայ հիւզարեանկ — կը խո-  
 նարհի ամենայն հպատակութեամբ : Նաև  
 կը կարծուի որ այս անընդմէջ իրողութիւնը  
 փաստերով ապացուցանելու հարկ չկայ :  
 յորմէհետէ ի միջի անթիւ անհամարներու  
 Մեծն Բրիտանիոյ Թագուհի, ընդարձակա-  
 ծաւալ Հնդկաստանի Կայսրուհի, « որպէս  
 զատուղս երկնից » անհայտ հարստակաց Վե-  
 հապետուհի եւն. եւն. տակաւին երկու  
 օր առաջ մտաւ այդ գերազանցապէս դժու-  
 խային իշխանութեան համայնայոյ ճիրանին  
 տակ, մինչդեռ միւս կողմէն ալ տարւոյն  
 տասներկու ամիսը սալայտակներու հար-  
 կադրեալ հիւր, միշտ քրջազգեստ, յա-  
 ճախ « ի փշոնաց անկեղց ի սեղանոյ մե-  
 ծատան » ապրած չուսուականն ալ միւսնոյն  
 դունէն կ'անցնի երթալու և ձեռները սեղ-  
 մելու համար հոն խոնուած միջիտուար  
 վեհապետներու և իշխանութիւններու :

Մահը անողք և անդիմադրելի զօրու-  
 թիւնն է հաւասարեցուցիչ :

Եւ բնութեան մէջ կայ մի գործիչ  
 մահէն աւելի հինաւորց, որ թէև տարբեր  
 եղանակաւ կը գործէ, բայց միևնոյն ար-  
 դիւնքը կ'արտադրէ. այսինքն մարդկային  
 սահմանակարգութիւններն առ ոչինչ հա-  
 մարելով ամեն ինչ կը հաւասարեցնէ : Այդ  
 գործիչն է սերը :

Ի նկատի առնելով դարուս ոգին և  
 ըմբռնումը, միանգամ ընդմիշտ ըսենք որ  
 սերը բառով կը հասկնանք այն անրացատ-  
 րելի հուրը, որ կը բղիթ անհունապէս բա-  
 րիէն, գերագոյն ճշմարտութեան և կ'ա-  
 ռաջնորդէ դէպի բարին, դէպի ճշմա-  
 րեալը, դէպի թոյլատրեալը :

Սէրը, ըսինք, մահէն տարբեր եղա-  
 նակաւ կը գործէ : Արդարեւ, մահը կը  
 քանդէ, սէրը կը կառուցանէ. մահը կ'ա-  
 նըզգայացնէ, սէրը կը խանդավառէ. մա-  
 հը ամուլ է, սէրը արդիւնաբեր. մահը  
 յափշտակիչ է, սէրը պարզեւիչ. մահը պա-  
 տիթ մ'է, սէրը երջանկութեան առաջնորդ-  
 մահը ժամանակաւոր է, սէրը յաւիտենա-  
 կան. մահը կը կաշկանդէ, սէրը կը լու-  
 ծանէ. մահը կ'ապականէ, սէրը կը նո-  
 րոգէ :

Սէրը իր այս առաւելութիւններէն զատ  
 ուրիշ նմանութիւն մ'ունի մահուան հետ,  
 այն է՝ ինքն ալ տեսակ մը մահ է. ԵՍ ին  
 մահը :

Մարդկային ընկերութիւնը լաւ ուսում-  
 նասիրած խորհող մը թերեւս պիտի վճռէր  
 թէ սէրը մահէն աւելի զօրաւոր է, քանի  
 որ կ'ընկճէ և կը շնչէ մարդու ամենէն  
 կորովի, ամենէն տակուն, ամենէն լիրբ  
 զգացումը : Մահը կը մաքաւի նիւթին  
 հետ, իսկ սէրը ինքնամուլութեան հետ :

Սիրոյ միջոցաւ ԵՍ ին չբացումն է որ  
 սիրոյ ամենէն նիւթացեալ վիճակին — ամուս-  
 նութեան, որ անոր ամենամուրիական և  
 խորհրդաւոր մի կիրառութիւնն է — մէջն  
 անգամ անակնկալ միջադէպներու ծնունդ  
 կուտայ մարդկային կենաց մէջ : Կարելի  
 է ուրիշ քանի վերագրել առաւել կամ նը-  
 ւազ մեծ իշխաններու պարզ ազարակա-  
 տիրութեան մը զիջանիւր : Այնպիսիք Ե.  
 թէ չեն կրնար մինչև իրենց դահը բարձ-  
 րացնել իրենց սիրոյ առարկայն, ինչպէս  
 Պօղոս Գ. Չարը բարձրացուց պանդակի ըս-  
 պատուհի մը Կատարինէ Չարուհին : Սիրող  
 և հիւզակ մը՝ կ'ըսեն և կը խոնարհին մին-  
 չեւ անոնց ստըը, ինչպէս քանի մը սարի  
 առաջ ըրաւ Շուէտի գահաժառանգ իշխանը,  
 հրաժարելով գահակալութեան իրաւունքէն  
 ի սէր գեղջուհւոյ մը, որուն հետ ամուս-  
 նացաւ օրինաւորապէս :

Այդ, մինչև ցարդ, հզօրագոյն ճանչ-  
 ցուած չարագէժ մահուան չափ հզօր մեր  
 այս բնատուր և գեղջնորհ յատկութիւնը,  
 զոր սէր անուանած են, և որ միակ ինք-  
 նին լիութի կը բաւէ մարդկութեան ամեն  
 անհատին խիստ նախանձելի, գրեթէ դեր-  
 մարդկային կացութիւն մը տալու, դժ-  
 բաղդաբար ունի՝ ինչպէս ամեն ճշմարտու-  
 թիւն՝ իր կեղծեալ նմանութիւնները, թե-  
 րեւս աւելի փայլուն տեսքով. բայց ապա-  
 կանեալ հիւթով, և որուն չարքը կը գառ-  
 նայ համակ մարդկութիւնը, իբրև թիթեա-  
 նիկը կանթեղին շուրջը :

Շուրջը կանթեղին, որ հուսկ ուրեմն  
 զայն պիտի փճացնէ սպառսպուռ :

Ընչաքացուցութիւնը, որ առաջինն է այս  
 ստապատիր նմանութեանց, մարդկութեան  
 վրայ կը ներգործէ այնպէս, ինչպէս օձը  
 ճնճուակի վրայ : Սիրոյ տեղ մետալ, փո-  
 խաղարձ վտանգութեան տեղ անարդ քրծ-  
 նութիւնք. հաւասարութեան տեղ յօժա-  
 րակամ ստրկութիւն. ահա այս է ժամա-  
 նակիս ընտանեաց պետերու՝ առն և կնոջ՝  
 կացութիւնը իրարու հանդէպ :

Չարմանակին, հակառակը այն է որ  
 զօրաւոր սեռը, մոռնալով ամեն վեհանձ-  
 նութիւն, ուրանալով ամեն արժանապատ-  
 ուութիւն, մակաբոյժը եղած է տկարա-

գոյն սեռին, հակառակ բնութեան օրի-  
 նաց :

Այս սովիւ դարուս մէջ ապրը իր ան-  
 դրանկութիւնը կը ծախէ պիտակ մը ոսպե-  
 թանի փոխարէն : Բայց բնութեան օրէնք-  
 ները մարդկային յեղեղակ բնաւորութեան  
 չեն նմանիր. անյեղլի են անոնք, և ուշ  
 կամ կանուխ կը պատժեն լմբաստը :

Այն որ ի սկզբանէ սահմանուած է ըն-  
 տանիքի առաջնորդը, վեհապետը, անըն-  
 դատուն ըլլալու իր գահակցին ձեռնառու-  
 թեամբ, իր շահախնդրութիւնով պարզ և  
 հլու կամակատար մը ըլլալու իր գատա-  
 պարտէ ինքզինք :

Եւ որովհետեւ թէ՛ կնոջ միահեծան ի-  
 խանութիւնը և թէ՛ քիչ շատ ինքնայարգ-  
 էրիկ մարդու այս ինքնալքումը իսկ հա-  
 կառակ են բնական օրէնաց. ահա առն և  
 կնոջ մէջ կը բացուի ասպարէզը անվերջ  
 վեճերու, կազ ու կռիւններու, որոնք կը  
 յանդին՝ գէթ մեծամասնութեան համար՝  
 այլևայլ անկարգութեանց : Եւ ահա՛, հա-  
 կառակ սենեցած սովիներուն չարարատիկ  
 և վնասատու ընտանիք մ'են :

Եւ այս ամենուն սկզբնապատճառն է  
 անյարգ սենյը դրամին, որ մարդկութեան  
 հետզհետէ վատթարացած բնութեան շուր-  
 հիւ՝ կը կոխտէ սէրը, կը մոռնայ մահը  
 և անոնցմէ աւելի հզօր երնոյթ մը կ'ըս-  
 տանայ :

Նախապաշարեալ, յետադիմական դա-  
 զափարներ պիտի գոչեն : Մենք կը պատաս-  
 խանենք : Եթէ լուսաւորեալ, յառաջդիմա-  
 կան կոչուած գաղափարներուն նպատակը  
 մարդկութեան երջանկութիւնն է, հարկ չկայ  
 բաղմահմուտ ըլլալու ապացուցանելու հա-  
 մար թէ ինչպէս ուրիշ քանի մը խնդիրներու  
 մէջ, նոյնպէս ամուսնական խնդրոյն մէջ ալ  
 սխալ սկզբութեան կը հետեւին այդ նորա-  
 մուտ գաղափարները : Տրամախոհութեան  
 նշոյլ կը նշմարէք յաւակնութեան մէջ՝  
 մարդկային տեսակէտով իրաւունքի հաւա-  
 սարութիւն պահանջելու ետեւէ մը, որուն  
 եկամուտով կը սնանինք :

Թերեւս յառաջ բերուի որ Հայունեաց  
 աւանդական պարկեշտութիւնը և անվիճելի  
 ամօթխածութիւնը շանթարգելներ են ժա-  
 մանակիս կայծակնալի միջնորդին մէջ : Ա-  
 տոր ըսելիք չունինք. բայց և այնպէս միշտ  
 վտանգաւոր է հրաշի սյին գետիմներու վը-  
 թայ շէնքեր կառուցանել :

Մարդ այս տխուր խորհրդածութեանց  
 մէջ կը սուզի յալկամայս, երբ ամենուն  
 բերնէն կը լսէ մանրամասնութիւնը գատա-  
 վարութեան մը — նորութիւն մը Հայոց հա-

մար — որ վերջերս տեղի ունեցաւ. Գահիրէի խառն դատարանին առջև :

Խնդիրը ինչնին խիստ պարզ է և դժ- բաղդարար՝ ոչ հազուադէպ : Երիտասարդ մ'է որ նշանուած էր օրիորդի մը, և քանի մը ամիս յետոյ կ'ամուսնանայ ուրիշ օրի- որդի մը հետ : Եւ կ'երեւայ թէ կը սիրէր իր առաջին նշանածը, որուն հետ հաստա- տապէս մտադրած էր ամուսնանալ, հա- կառակ իր (երիտասարդին) հօր ընդդիմու- թեան : Այս պարագայները չեշտուած են երիտասարդին կողմէն օրիորդին խնա- մակալներուն ուղղուած նամակի մը մէջ : Բայց անոր այս որոշումը փոխուեցաւ, վա- սնիցի, կ'ըսէ օրիորդին պաշտպան-փաստա- բանը պարտին հայրը չափազանց սիրելով դրամը և աշխարհը, կարեւորութիւն չ'առ- ւաւ առաքինի այլ աղքատ անձի մը խե- աշկան երջանկութեան, և համազօր իր տղան նշանախօսութիւնը խզել և կ'որիկ դրամօժիտ ունեցող ուրիշ օրիորդի մը հետ ամուսնանալ :

Երիտասարդը ըրաւ ինչ որ հայրը ու- զեց որ ընէր : Բայց չենք գիտեր թէ խօսա- մնադրութիւնը փնտռելու է իր ծնողաց հնազանդելու պարտականութեան մէջ, թէ ինքն ալ սրտակից գտնուած էր իր հօրը :

Ինչ որ ալ ըլլայ, դրամը իր խելակո- ռոյս ազգեցութիւնը ուժգնապէս ի գործ դրաւ հօր և թերեւ՝ որդւոյն վրայ միան- գամայն : Բայց միևնոյն ժամանակ պատժը- ուեցան իրենց սիրոյն առարկային մէջ, գատապարտուելով օրիորդին վճարել իւր բարոյական տուգանք՝ 300 ոսկի և չեմ գիտեր որքան ալ իւր նիւթական վնասա- հատուցում :

Յաւալի է արձանագրել այսպիսի հղե- լութիւններ, կսկիւղի է մանաւանդ մեր տգեղութիւնները մերկապարանոց պաշտելի այլազան, այլազգու, այլակրօն դատա- լորներուն առջև :... Կը կարծէինք թէ՛ Հայոցս համար՝ աւելի առաջնորդարանի կը պատկանէր նշանուածը, ամուսնական խն- դիրներու պէս առտնին գործերով զբաղել : Արդեօք դատախազները նախապէս դիմե- ցին վերոյիշեալ իշխանութեան, և եթէ դիմեցին ինչ պատասխան առին :

Շահականութենէ զուրկ չէ լուսաբան- ուիլ այս կէտին վրայ, եթէ առաջնորդա- րանը կամ օրիորդին հանրածանօթ փաստա- բանը Տիար Յակոբ Ասատուրեան հաճէր խօ- սիլ :

Պ .

ՏՐՎԷԹԻ ՀԱՄԲԱԻԸ

Ժուպէր, Գրոնիէ և Տրվէթ երեք փառա- լոր անուաններն են հարաւային ափրիկէի պա- տերազմին մէջ որ կը փայլին Պօէրական գծե- լէն և կը նսեմացնեն իրենցմէ գերազանցապէս աւելի փառաւոր անուանները Ռօպըթսի, Գիչ- նէրի, Պուլլըրի և Տրէնչի որք պատերազմող- ներուն այն կողմին վրայ կը գտնուին որ քա- ղաքակիրթ աշխարհի հակակրօնականը ենթա- կայ եղած է զգալիաբար : Պօէր երեք զօրա- պետներուն մէջ Ժուպէր թերեւս մեծագոյնն է Գրոնիէ մեծ թերութիւններ ունէր իւր զինուոր զորս իր գերմանացի և զաղիացի պատերազ- մակիցները երեւան հանեցին իւր պարտութեան առթիւ քննադատելու պահուն : Ժուպէր մեռաւ Գրոնիէ գերի բռնուեցաւ : Տրվէթ սակաւին թա- ցերը կը պտտի և սարսափ կ'աղղէ փոքր պա- հապան զօրաց խումբերու, և կամ տկար կեր- պով պաշտպանուած վաճառաքարձ կառախում-

րերու : Տրվէթի համարը այն աստիճան բար- ձրացաւ որ ամենք սկստն զինքը երկրորդ նա- բուէն կոչել : Այս շքեղապանձ անուանը կը տըր- ուի անոր մանաւանդ ֆրանսացուց կողմէ ի հե- ճուկա անդդիացուց : Բայց Տրվէթ երկրորդ նա- բուէն մը չէ ոչ ալ երկրորդ Գիչնէր մը, այլ պարզապէս հրոսախուժի մը յաջողակ պետը : Չենք կրնար գուշակել թէ ինչ ուղղապիտակա- կարողութիւններ կրնար ցուցնել թէ պատեհու- թիւնը ներկայանար և մեծ բանակի մը գլու- խը գտնուէր : Բայց սա չափը գիտենք որ մին- չեւ ցարդ կատարած գործերը չեն կրնար զինք պատմութեան նշանաւոր զօրապետներուն կար- գը դասել : Իրաւ է որ իր մէկ երկու հազար հե- տեւորներովը անդդիացուց մեծ նեղութիւն կը պատճառէ և անոնց աշխուժը հետամտութեան խոյս կուտայ, բայց կեռիչա կոչուած պատերազմ- ներու մէջ ասոնք խիստ պարզ գործողութիւն- ներ են և արտաքոյ կարգի սիրագործութիւն- ներ մատնանի չեն ընէր : Մանաւանդ երբ նը- կատողութեան առնեք այն առաւելութիւննե- րը, որով Տրվէթ և իր ընկերները շրջապատ- ուած են, պիտի տեսնենք թէ անոնք իրական արժանիքի մասին որ և է գերազանցութիւն չ'ունին մեր իսկ Ձէյթուէի քաջերէն, որ հա- կառակ ամեն աննպատ պարագաներու՝ ամիս- ներով թրքական ահազին բանակի մը գիմար- լեցին : Մերիները կը պատերազմէին թշնամի երկրի մը մէջ շրջապատուած թշնամիներէ : Իսկ Պօէրները իրենց սեփական երկրին մէջ շրջա- պատուած բարեկամներէ և ազգակիցներէ : Անց- եալ շարթ Լոնտոնի մէջ հրատարակուած պա- տերազմական պաշտօնագրին մէջ զօրապետ Հըն- թըր սպայէ կ'ամփոփէ Պօէրներուն առաւելու- թիւնները իրենց վրայ, զորս «Փայմզ» իր փետր : Թ խմբագրականին մէջ կ'արտասպէս : «Անոնց գիւրազարժութիւնն է զլիսաւոր կէտը ուր անոնք կը գերազանցեն մեզ : Անոնց վե- րազանց դիւրաշարժութեան պատճառաւ կրնան դիմադրել մինչև որ ևս մղուին, երբ, փոխա- նակ յաղթուած ըլլալու, նոր դիւրք մը կը բռն- նեն և կամ բանակին թիւը կը զօրացնեն, և ուսպէս մեր կողմնակի յարձակումը ճակատային կ'ընեն իր բոլոր դժուարութիւններովը : Անոնց տեղակալ հետուութիւնը, ճամբորդելու գիւրու- թիւնը, այս երկրին մէջ գործածուած երկք լեզուներու գիտութիւնը, անոնց լուրերուն աղբիւրները մարդոցմէ և կնիկներէն, համազ- գեստ չ'կրելը, որով կարող կ'ըլլան մէկ րոպէ- ին խաղաղասէր ազարակապան մը ձեւանալ և երկրորդին գործունեայ թշնամի մը ըլլալ : ա- նոնց զէնքի, ուղղամթերքի և կերակուրի գաղտնի մատակարարութիւնը, ֆիզիքապէս չարքաչ և տոկուն ըլլալը, ձիերու և փոխազ- րութեան հետ անոնց յաջողակութիւնը, երկրին արտադրած բոլոր միջոցներուն իրենց արա- մապարտեան սակ ըլլալը և մեզմէ զլացողիւ, ասոնք են մի քանիները այն առաւելութիւն- ներուն՝ զորս Պօէրները ունին այս պատերազ- մին մէջ :» Տրվէթի պարծանքը կը կայանայ սա կէտին մէջ թէ անիկա գիտէ օգուտ քաղել այս առաւելութիւններէն : Ընդհակառակը Անգ- ղիացիները կը ճգնին անպին խոչընդոտներու գէմ, օտար երկրի մը մէջ, թշնամիներէ շը- ջապատուած, որուն լեզուն անգամ չեն հաս- կրնար : Ասկից ի զատ ունին իրենց հսկողու- թեանը տակ 60,000 Պօէր փոխստականներ, որոնք պէտք է կերակուրին և պաշտպանուին իրենց հայրենակիցներուն գէմ :

Անգլիացիները իրենց գերազանց կարողու- թիւնը իւր զինուոր միշտ ցոյց տուած են ա- մենանեղ պարագաներու տակ : Լէյտիսանթներ են անոնց քաջագործութեան և տոկունութեան : Անգլիացիները այն ատեն միայն յաղթուած են որ անառիկ դիրքերու վրայ յարձակալ և թը- նամին անկէ վանելու փորձած են : Յաճախ ալ հակառակ Պօէրներուն նպատաւոր դիրքին Անգ- ղիացիք յաջողած են : Բայց ե'րբ այս պատե- րազմին սկիզբէն մինչև հիմա Պօէրները կը ցած են յարձակումներ գերքի մը տիրանալ : Ամենէն վերջին ճակատամարտը, որ տեղի ունեցաւ Յուն, Յ1 ին, կրկին փառաց դաբին Անգլիացուց կողմը դրաւ : Տրվէթ անձամբ կը հրամայէր

2500 Պօէրներու, որ յարձակեցան 700 Անգլի- ացիներու վրայ, երբ անոնք խիստ դժուար կացութեան մը մէջ էին : Անգլիացիները միայն թնդանօթ մը կորսնցնելով կը ցան ազատիլ և միայնալ իրենց հայրենակիցներուն :

Տրվէթ իր անուան մեծ աղարտ մը բերաւ մէկ անխնամ քայլով : Կը պատմուի թէ երկու խաղաղութեան պատգամաւորներ հրացանի բռն- նուած են Տրվէթի հրամանով : Մօրկէնտալ և Վէսելա բանասարկուած էին Տրվէթի լակէրին մէջ : Առաւօտ մը յանկարծ շարժում մը նշմար- ուեցաւ բանակին մէջ և երկու պատգամաւոր- ները հրամայուեցան սպասել սայլի մը քով մին- չեւ որ շորիները հասնին : Մինչ անոնք կը սպասէին, պաշտօնայ մը մօտենալով հարցուց թէ ինչո՞ւ չեն քալեր : Մօրկէնտալ պատասխա- նեց թէ իրենց հրաման եղած էր սպասել շորի- ներուն : Պաշտօնեան ասոր վրայ սկսաւ վայրե- նաբար հարուածել Մօրկէնտալի գլուխը և երե- սը և ըսաւ թէ քեզ հրացանի քանիս կուգայ : Տրվէթ վրայ հասնելով և խօսակցութիւնը լսած ըլլալով ըսաւ : «Ուրեմն ինչո՞ւ չես ընէր :» Պաշտօնեան անմիջապէս կրակ ըրաւ և կապարը Մօրկէնտալի մարմնոյն մէկ կողէն մանկելով միւ- սէն գուրս ելաւ : Այս և ասոր նման գործեր — կ'ուսախուժեր խորտակել և ճամբորդները կողոպտել, չ'պատերազմողները հայածել և մին- չեւ իսկ հրացանի բռնել, տեղացիները անխնայ շարժել — շատ հեռու կը կացուցանեն զինքը գատուել նշանաւոր զօրապետաց կարգը :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՂԻՄԱՆԻՐԻԱ . . . Առաջիկայ երկու- շաբթի ՁիՁիՆԻԱ թատրոնին մէջ պիտի տրուի շքեղ երկերով մ'ի Նպաստ Աղէք- սանդրիոյ Հայոց Ազգատախանամ-Բարեգոր- ծանկան ընկերութեան :

Ն . Վսեմութիւն Պօլստ Փաշա Նուպար իր բարձր հովանաւորութեան տակ առած է երկերովը, ուրեմն պիտի ըսենք որ այս անուոր միայն կը բաւէ այժմէն յայտարա- րելու համար թէ՛ երկերովը պիտի ըլլայ թէ՛ շքեղ ու փայլուն, և թէ՛ պէտք ե- ղած էն շատ աւելի արդիւնաւոր :

Կազմակերպիչ Մասնախմբի անդամոց անուանքն, սրք են Վսեմ. Կ. պէյ Ռէ- յիլեան — Պատուակալ Ատենապետ, և Տի- արք Զարեհ Սըվալլի — Ատենապետ, Ղ. Ատրուէի, Լ. Մկրտչեան — Բարտուղար- թ. Կամսարական — Գանձապետ, Պ. Օ- հանեան, Լ. Պէրպէրեան — Խորհրդական անգամք, ցոյց կուտան թէ լեցուն սրա- հով մը պիտի ընդունուի Վալիէրի համ- բաւոր Օրէրան ԼՕՀԱՆԿԻՆՆԵՐ :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՄՅՈՒՄ . . . Զո- բեքչարթի երկեր տեղի ունեցաւ Գահիրէի Հայ Բարեգործական հաստատութեանց ի նպաստ կազմակերպեալ թատերական երե- կերովը :

Խաղական թատրոնի ընդարձակ սրա- հը և օթեակները գրեթէ ամբողջովին դրաւ- ուած էին : Զուտ հասոյթը, որ վեց ընկերութիւն- ներու մէջ պիտի բաժնուի, ըստ ոմանց 80-100 ոսկի կը կարծուի. իսկ «Գուրիէ տիւ նիլ» որ աւելի իրազէկ ըլլալու է ներ- կայացման հաշուական մանրամասնութիւն- ներուն, հետեւեալ կը հրատարակէ հինգ- շաբթի օրուան թուովը :

«Երէկ Խաղական թատրոնի շքեղ սը- լաճին մէջ, որ գրաւուած էր բազմաթիւ- զբօսաշրջիկներէ և հայ գաղութի ընտրեալ մասէն, Տիկին ձէն Հէյտինկ ներկայացուց

« Պաղտատի իշխանուհի ըն, ի պատիւ Ալ. քատասիրութեան տօնին, որ այնչափ փայլուն կերպով կազմակերպուած էր Պ. Ա. աքթել Փափազեանի կողմէ :

« Հրաշալի արուեստագիտուհին, զոր Փարիզ իր արուեստագիտական երկնքին ամենափայլուն աստղերէն մին ըրած է, բոլոր հանգիստականներուն աչքերը իր վրայ յառել տուաւ :

« Երբէք արուեստագիտուհի մը այնչափ չէ պատուասիրուած և շողմուած, որչափ Տիկին Հէյտինկ չորեքշաբթի երեկոյ. իր անհուն տաղանդը սրահը ելեքտրացոյց և հանգիստականները յաղթական պատուոյ ցոյցեր ըրին : »

« Եստ երջանիկ և հպարտ ենք, կ'ըսէ « Գուռիէ տիւ Նիլ », որ այս թրթուռն մեծարանքը կ'ըլլայ Ֆրանսայի փառքերէն միոյն. աւելցնենք թէ՛ այս երեկոյթին անզուտ հասոյթը, որ Հայ Բարեգործական ընկերութեանց կը պատկանի, 300 սակի հասած է : Ն. Պ. Խտիվը 20 ոսկի նուիրած է այս Բարեգործական հանդիսին համար :

« Արեւմտ ասիկա մեծ յաղողութիւն մ'է երեկոյթը կազմակերպողին և ամենամեծ պատիւ մը իտիվիսի արուեստագէտներուն : »

— Ն. Բ. ԽՏԻՎԻՆ Եղբայրը, Իշխան Մօհամմէա Ալի, անցեալ օր Գահիրէ հասած է և Ն. Բարձրութիւնը ունկնդրութիւն չնորհած է անոր, որոյ միջոցին ամենամարամասն տեղեկութիւններ հաղորդած է Եգիպտական ներկայացուցիչներուն դէպի Անգղիա ըրած ճամբորդութեան և անոնց եղած փայլուն ընդունելութեան մասին :

ՍՈՒՑԱՆ. — Սուտանէն եկած վերջին լուրերուն նայելով Աւինկէթ Փաշա Գօրտօֆանէն դառնալէն յետոյ Խարթումէն Գասալա մեկնել է : Անկէց ընդհանուր կառավարիչը Սուաքիմ պիտի երթայ և Սուաքիմէն Սուէզի ճամբով մայրաքաղաք պիտի ժամանէ Մարտ ամսոյ վերջերը :

Գանի մը ամիս Գահիրէ մնալէ յետոյ Սէրտարը և իր կինը Անգղիա պիտի մեկնին :

ՎԱՂԸ ԵՐԵԿՈՅ

Մեր մէջէն շատեր կուզեն հաստատել թէ՛ գէթ ազատ միջավայրերու մէջ, Հայերու եւ քաղաքակրթիկ համարուած ազգաց տարբերութիւնը շատ աննշան է. բաղդատութիւն մը որ տարբերակ, անհեթեթ և անզր կը գտնենք : Վասն ենք թէ՛ քիչ ժամանակուան մէջ, եթէ կարենանք մեր մէջ արմատ ձգած մի քանի գլխաւոր թերութիւններ ուղղել, ա՛յ տարակոյս չ'մնար որ փոխանակ մենք զմեզ ուրիշ ազգերու հետ բաղդատութեան դնելու, անոնք պիտի նախաձեռնարկ ըլլան մեզ բաղդադիլ իրենց հետ և երբեմն ալ մեզմէ օրինակներ տանել :

Հիմակ կարգը մերն է անոնցմէ օրինակուելու : Հայ Բարեգործական ընկերութեանց վերջին ներկայացուցիչ մեզի բաներ մը կը սորվեցնէ եւ խորհրդածելու նիւթեր կուտայ : Դեբասաններու եւ դերասանութեանց համար բարեգործական ընկերութիւնները վճարեցին 100 եւրպտական ոսկի. գումար մը՝ որուն երկու երեք անդամն ալ մէկտեղ առնելով կարելի պիտի ըլլայ մեզ ունենալ սեփական թատրոն մը եւ անոր մէջ պատրաստ դերասաններ և ունկնդր :

Իսկ երբ հաշուենք այդ գումարին վրայ աւելցուած գովեստները՝ որոնք վճարուած գումարին տոկոսներն են, ա՛լ երեւակայեցէք թէ

բարեգործական ընկերութիւնները ի՛նչ վճարած եղան դերասանական խմբին :

Հիմակ գտնենք մեր Հայ գերասաններուն եւ հոսկիսանք թէ՛ — ՏԱՐԵԿԱՆ և ոչ թէ՛ մէկ անգամի համար — ի՛նչ կը վճարենք. պատասխանը դերութեամբ կրնանք տալ. — ոչինչ : Նպատակ մը միայն, այն ալ քիչով պոչով արժէքագուրի ընելէ վերջ . . . :

Տիկին ՄԱՐԻ ՊԵՆԵՍԵՆ որ զժամանակէն ինչու ամեն պատճառներ ունի — գեա երկու ամիս չկայ իւր սրտի ընկերը Պ. Երուանդ Պէնթանը կորսնցուց — վաղը երեկոյ նպատակ մը տալու պատրաստուած է. տեսնենք ի՛նչ արդիւնք պիտի ունենայ այն. անշուշտ օտարները լիքուտ վարձատրելու փութացողները, պիտի մտածեն թէ Տիկին Մարին ալ այնչափ և անկէ շատ աւելի քաջալիքուելու իրաւունքներ ունի, երկար տարիներէ ի վեր հայ բնմին իր մատուցած ծառայութիւններովը :

Ներկայացուցիչ Քէմալ Պէյի « Զուալլը Զօնուք » ն է, որ Եսրա Ապարիւ Ազիզի եգիպտական թատրոնին մէջ պիտի արուի :

Խաղին ընտրութիւնը պարագաներուն կը յարմարի, կարծես իր արդի վիճակին ակնարկել կուզէ. բայց գիտնալու հետամուտ ըլլանք թէ ի՛նչ արդիւնք պիտի կրնայ ձեռք բերել Տիկին Մարի Պէնթան ՎԱՂԸ ԵՐԵԿՈՅ :

Այնուհետեւ մենք զմեզ օտարներու հետ կրնանք բաղդատել :

ԱՐԳՈՍ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Աթէնք 26 փետրուար. — Պետութիւնները մերժած են Եօրկիոս իշխանին Կրէտէն Յունաստանի հետ միացման, և միջազգային զօրքերու փոխարէն Յունակսն զօրքերու գրաւման առաջարկը :

Սօֆիա 26 փետրուար. — Պուլկար Մակեդոնական Գօմիթէի անդամները բացարձակօրէն կը յայտարարեն թէ՛ գօմիթէն Ֆէրիսիանս իշխանին մահը վճարած է, ուրուն ընթացքը ազգային շահերուն հակառակ կը նկատուի :

Կ. Պօլիս 26 փետրուար. — Ֆէրիսիանս իշխանը հեռագիր մը կարկած է Սուլթանին խոտտանալով Մակեդոնական գօմիթէն շնջել :

Սէլանիկ 26 փետրուար. — Դաւադրութիւն մը գտնուած է որով դիտաւարութիւն կայ եզեր Յունական հիւպատոսարանը օգը հանել :

Բէյրութաուն 26 փետրուար. — Օրանտ գետը անանցանելի է, Տը Ուէթ և Սիթէյն չեն կրցած անցնիլ և դէպի արեւմուտք ետ գառնալով Օրանտ Իրիվըր Սիթէյնի հարաւակողմէն երկաթուղիի դժէն անցած են : Բըրիտանական զօրքերը շղթայ մը կազմած են որ այդ տեղէն մինչև Նարվալսքօնթ կը տարածուի և Պօէրիսիան կը մերձենայ :

Բրէթօրիայ 26 փետրուար. — Զօրավար Պօթա 2000 Պօէրով կարողացած է զօրավար Ֆրէնչի հետապնդումէն ազատել, սրն որ դէպի Գօմիթի Բօրթ կ'ուղղուի :

Սօֆիա 27 Փետր. — Մակեդոնական գօմիթէն յայտարարութիւն մը կը հրատարակէ, որով կը բողոքէ Սէլանիկի մէջ Պուլկարներու ձերբակալութեան համար և կը հրաւիրէ Մակեդոնացիները ապստամբական շարժման պատրաստուելու, որ գալ ամառ տեղի պիտի ունենայ :

Բէյրութաուն 27 Փետր. — Երէկ և այսօր ժամնախտի 13 նոր դէպքեր պատահեցան որոց 3ը մահացու :

40 Պօէր ուրք Շէթէրի շակարը կը

պաշտպանէին՝ դերի բռնուեցան իրենց ազխերով :

Պէլկրատ 28 Փետր. — Ալէքսանտր թագաւորը, իր Պօլսոյ գեապանին միջոցաբարեկամական ցոյցի ըրեր է Բարձրագոյն Դրան Մակեդոնիոյ կացութեան համար :

Ի Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ՖՐԱՆՍԱ. — Արման Սիլվէսթրը գրագէտը մեռած է. 1837 ին ծնած էր Բարիզի մէջ և շատ մը նշանաւոր վէպեր, կատակերգութիւններ, բանաստեղծութիւններ և տառամներ գրած է :

ՍՊԱՆԻԱ. — Անցեալ օրեր երբ Սպանիոյ մայրաքաղաքին մէջ տիրող խռովութեանց մանրամասնութիւններով կ'ըրաղէինք, ծանուցինք թէ՛ Տիկին Սպասօ բարձրագոյն ատենի վճռոյն դիմած է, ճիշուութիւններու ձեռքէն ազատելու համար ոչ միայն իր ազնիւր և անոր պատիւը . . . այլ և իւր ազնիւն ժառանգած անհաշուելի հարստութիւնը, որ նայնպէս փոսնդի ներքեւ էր : Եւրոպական վերջին թերթերը կը ծանուցանեն թէ՛ բարձրագոյն ատենի ի նպատակ Տիկին Սպասօի վճռած և հրամայած է որ Օրիոյց Սպասօ իր մօրը վերադարձուի :

Ահա ժողովրդեան ձայնի ազդեցութիւնը, որ յաճախ ամեն տեղ կը հասնի և այս առթիւ ալ անժխտելի կերպով կը հաստատէ թէ՛ ժողովուրդը ամեն բանէ վեր է, երբ իր իրաւաստութիւնները տրամաբանօրէն պաշտպանել գիտնայ :

Ա Ձ Դ

« Արշալոյս » զբաշարը Պ. Յովսէփ, որոյ մասին նախորդ թուով ծանուցած էինք թէ երկու օրէ ի վեր անհետացած է, գործով մը Աղէքսանդրիա մեկնած է եղբւր եւ ածապարանքի տակ մոռցած է մեզ իմացնիլ : Այժմ ուրախ ենք ծանուցանելու որ վերադարձած և վերսկսած է իր պաշտօնը :

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱՂԷՔՍԱՆԴՐՈՅ

Վեց ամիսը կա՛մ տարին անգամ մը Աղէքսանդրիոյ « Ժողովրդային Գրադարան » ինչ վրայ խօսել մեր պարտականութիւնը կ'ըլլայ, երբ յեղեալ հաստատութեան Վարիչները փոյթը կուրենան իրենց ընդարձակ տեղեկագիրը և մանրամասն հաշուեցուցակը մեզ զրկելու :

Գանի մը ամիսներ առաջ առիթը ունեցած ենք Աղէքսանդրիոյ « Ժողովրդային Գրադարան » ի մասին խօսելու այս էջերուն մէջ, ներկայացնելով շայն հաստատուն հիմերու վրայ գրուած և ժողովուրդին համար օգտակար հաստատութիւն մը :

Սխալած չենք ուրեմն և ուրախութեամբ կրնանք ծանուցանել թէ՛ երէկ բուտացանք անոր անցեալ 1900 տարեշրջանի տեղեկագիրն հանդերձ նշուելիչօքն, որուն մէջ յարատեւութեան և օգտակար հանգիստանալու տենչը բացարձակ կը փայլի :

Եթէ մեր անձուկ էջերը ներէն, կ'արժէր արգարե որ շատ լայն դժբախտ մէջ ամփոփէինք անոր առաւելութիւններն, բայց տեղեկանալով որ այդ հաստատութիւնը արգէն Աղէքսանդրաբնակ հայու

Թեան գրեթէ ընդհանուրին համակրանաց  
և քաջալերութեանն արժանացած է, բա-  
ւական կը համարինք անոր տեղեկագրին  
մէկ քանի մասերը զեանդել «Արշալոյս»-ի  
մէջ, գոնէ Գահիրէքնակ մեր սիրելի ազ-  
գայնոց իբր օրինակ ծառայեցնելու, որոնք  
քաջութիւնը ունեցան քանի մը օր առաջ  
փակելու դռները՝ Պաղար Մուրուրի Լսա-  
րան-Ընթերցարանին, որուն ինչպէս վըս-  
տահ ենք, յարատեւութիւնը՝ համակրանե-  
րու խումբեր պիտի հաւաքէր իրեն շուրջ  
և թերևս օր մը պիտի կարենայինք հաս-  
նիլ մեր փափաքին, որ էր՝ ունենալ Գա-  
հիրէի մէջ Լսարան-Ընթերցարանուն մը, և  
գոնէ շարժը անգաղ մը ժողովուրդը հան  
համարմբելով, խօսակցել անոր սրտի ու  
զգայման թելերուն հետ:

Իժարող պէտք է համարուինք որ չու-  
նինք և թերևս յետ այսու այդպիսի հաս-  
տատութիւն մը չ'կարենանք ալ ունենալ:  
Իրաւ է թէ ոմանք ժողովուրդը հաւատաց-  
նել կուզեն թէ Ապտինի մէջ Լսարան-Ըն-  
թերցարանուն մը գոյութիւն ունի և անոր  
հետ իր «օւկան Նոր-Մր»-ը. բայց սա  
հիմնովին ստուծիւն է և ողջամիտները՝ նոյն  
իսկ կը զայրանան այդ օրինակ ստուծիւն  
մը անպատկառօրէն իրենց երեսին նետուած  
ըլլալուն համար:

Մեր նպատակէն դուրս է սակայն այժմ  
Աղէքսանդրիոյ Գրադարանով զբաղելու առ-  
թիւ մեր գործերով չ'փութել զայն, բայց  
չենք ալ ուզել առիթը ներկայացած ատեն  
ճշմարտութեան ձայնը չի թրթռացնել ու-  
մանց սրտին մէջ, որոնք միայն ստել վար-  
ժուած են իրենց հանրային բոլոր ձեռնարկ-  
ներուն մէջ:

Գալով Աղէքսանդրիոյ «Ժողովրդային  
Գրադարանին», որուն այժմ տեղեկագիրը  
և մանրամասն հաշուեկէշուր ունինք ձեռքի  
տակ, տեսնելով անոր իրապէս յառաջգի-  
մական քայլերը, բաղդատութեան չենք  
կարող գնել Գահիրէքնակներուն չունեցածին  
հետ, ուստի ինչպէս ըսինք, պէտք է առ-  
նել անոր տեղեկագրին մէկ քանի հաս-  
ուածներն:

«Ժողովրդային Գրադարան անունը ան-  
ցեալ տարույ Ապրիլի 1 ին վերափոխուած  
է «Ժողովրդային Մատենադարան-Լսարա-  
նի և հաստատութեան վարչութիւնը՝ ցան-  
կանալով յարգելի հասարակութեան և բա-  
ժանորդ անդամներուն յստակ և ուղիղ դա-  
զափար մը տալ, ընդարձակ և մանրամասն  
տեղեկագիր մը հրապարակ հանած է:

Հիմնարկութիւնը կ'ստանայ 29 թեր-  
թեր և հանդէսներ, հայերէն և ֆրանսե-  
րէն լեզուներով, որոց 21 ը ուղղակի խմբ-  
բազրութիւններու և 8 ը Աղէքսանդրական  
մասնաւոր անհատներու կողմէ նուիրուած  
են:

(Շարունակելի)

**ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ**  
ՈՒՐԱԹ 1 ՄԱՐՏ 1901

4202	8525	5573	2893	4141	158
661	552	1200	1542	3543	2084
3719	4443	4558	5458	5951	6291
6784	6857	7000	7630	7607	7726
	7981	8163	9479		

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

**Ս Ի Ն Կ Ե Ր**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԵՐ

Պալարի փողոց . Խազնետարի սեփականութիւն, Պրիսթլ Սթրիթ Տիշտ գիւմաց,  
Գաթէ Տը Լա Պուրսի կից:

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ՔՍՂԱՔԵՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ


Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկեր Նեյն են ևւ ասոնցմէ մինչև ցարջ  
17,000,000 ծախուած է:

400 է աւելի վիսյակներով եւ մետրոյներով վարձատրուած, երաշխաւորեալ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ  
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական խառնասահակախախն մէջ ստացած է:

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ  
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ  
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ԵՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ,  
ուշադրութիւն դարձնել իւ-  
րաքանչիւր մեքենայի վրայ  
ՍԻՆԿԵՐԻ յասկանշիւն:

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

Ձրի դասեր և նորոգու-  
թիւններ, Սինկեր մեքենա-  
յից համար, յաճախողաց  
տուններուն մէջ:

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւններն մեքենայից  
եւ նորոգութիւն ամեն կարգի  
Մեքենայից

**ՄԱՆԿԱՐԱՐՉ  
ՏԻՊԻՆ ՍՈՓԻԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ**  
Շարա-Ապսիդ-Ազիզ

Վերջերս իւր բնակութիւնը կուրուսիքէն  
փոխադրած է Շարա Ապսիդ Ազիզ, Աւել փողոց  
Շէրիֆի պարտիզին դիմաց, Ահմէտ պէյ Ապ-  
տիւլ Բազզիի 20 թիւ սեփականութեան մէջ:

Տիպին Սոֆիկ Ազգապետեան իւր փորձա-  
ուածութեամբ եւ յաջողակութեամբ արդէն ծանօթ  
ըլլալով գահիրէքնակ ազգայնոց եւ նոյն իսկ  
օտարաց, աւելորդ կը համարուի զայն յանձնա-  
բարել իւր խնամողը պէտք ունեցողներուն:

Վկայեալ աղքատներուն համար ձրի  
դարմանում:

**ՄԻՆԱՔ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅԻՆ**

Գանի որ ՍԷԼՎԱՃԱՆ Վաճառատուն մէջ  
(ի Մուսքի պիտի գտնէք միմիայն 22 ՎՄԻ ի  
նիքէլ, կոթէն լարուղ սիրուն ծամագոյնց-  
ներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է:  
Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժաւացոյցի,  
120 ՂՐԵ է սկսեալ մինչև 2500 ՂՐԵ: Ինչ-  
պէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և ք-  
սիտէ ժամացոյցներ. պատի և թոնալի բոլ-  
մազան Բանտի շներ և ամեն ճաշակի յար-  
մար Գոհարեղէնք:

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերկէսի ԹՕ.  
նակարձներու:

**ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ**  
ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ  
ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամե-  
նէն աւելի շահարաժիները:  
Ապահովագրեալներուն արդէն վճարած  
է կամ ինպատկարենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ  
480 ՄԻԼՈՆ՝ որ գրեթէ այսարհի ուրիշ որ  
և է ընկերութիւնէ մէկ միլեար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ  
ի Գահիրէ

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ  
ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ  
ԱՐՇԱԼՈՅՍԻ՞՞**  
ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՐՏ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶ ՍԿԻՔԸ  
Օսկանի ղեկարակնի դիւնցի փողոցին մէջ:

Ժողովրդական տպարանին մէջ կը պատ-  
րաստուին:

Այցեխարտեր, Երջարեղակներ, Դիւլեր,  
Հրաւիրագրեր, Մանագրներ, Տեղեկագրիչներ,  
Կանոնագրեր, Տոմսեր և այլ և այլ տպ-  
րանի վերաբերեալ յանձնարարութիւններու  
կը վաճառուին հետեւեալ գրքերն:

1. ԲՆԱՇԻՄԱՐՀԻԿ ԲԱՌԱՐՄՆԻ Ա. և Բ.  
պրակներն, որոնք նոր հասած են և որոց  
մասին արդէն խօսուած է «Արշալոյսի» մէջ:
2. ՈՐՐՈՒՆԻ, որ նոյնպէս նոր հասած  
է և որոյ ի Թուրքիա մուտքը, ինչպէս կը  
լսենք, արգիլուած է եղեր:
3. ՀԱՌԱՔԱՏՈՅ Հայոց ժողովրդական  
երգերու, Փարիզ տպագրեալ, Տնօրինու-  
թեամբ Տ. Լևոն Եղիազարեանցի:
4. ՁՈՒՄԱՐՃԱԼԻ Անիքթոններ և ժո-  
ղովրդական վէպիկներ կամ Մարդկային  
կենաց վարագոյրը և ուրիշ նոր հրատարա-  
կութիւններ:

Աշխարհի մէջ գտնուող շուրջ 100 և է ին-  
կերութեան աւելի երաշխաւորութիւններ,  
ընդարձակ գործառնութիւններ և հրօգու-  
րակի վրայ աւելի ապահովագրութիւններ  
ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ ԳԼԿԱՌՈՐ ԳՈՐԾԱՆ  
կատար յ'Աղէքսանդրիա: